ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի նախապատրաստումը դասապրոցեսին

Կատարող՝Ռուզաննա Դիլաֆյան

Առարկա՝ Պատմություն

Ուսումնական հաստատություն՝ Լեռնանիստի Ս. Նազարյանի անվան միջնակարգ դպրոց

ՀՐԱԶԴԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.....4

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ.....5

ԳԼՈՒԽ 1.1 ԴԱՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ.....6

ԳԼՈՒԽ 1.2 ԴԱՍԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՄԵՐ ՓՈՐՁԸ.....8

ԳԼՈՒԽ 2

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՔԱՐ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՂ.....11

ԳԼՈՒԽ 2.1 ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՔԱՐ 13

ԳԼՈՒԽ 2.2 ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՂ.....15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵԽԱՑԻՆ ԵՐԲԵՔ ՄԻ՛ ՍՈՎՈՐԵՑՐԵՔ ԱՑՆ, ԻՆՁՈՒՄ ԻՆՔՆԵՐԴ ՎՍՏԱՀ ՁԵՔ։

Ամեն դարաշրջան իր խնդիրներն ու պահանջներն է թելադրում դպրոցին: Կրթական նոր բաղաբականությամբ կարևորվում է ուսուցչի դերը՝ որպես բովանդակության մշակողի, որպես նորարարի: Կրթակարգը ուսուցչի գործունեության ուղեկիցն է լինելու: Մեծանում է ուսուցչի պատասխանատվությունը: Նա իր մեթոդական պատրաստականությունն ու գիտելիքները հարստացնելու խնդիր ունի: Նա պետք է ապահովի պետության ակնկալիքները հանրակրթությունից:

Ուսուցիչն իր աշխատանքին զուգահեռ պարբերաբար վերապատրաստվելու, մասնագիտական նորություններին և դասավանդման նոր մեթոդներին ու ռազմավարություններին ծանոթանալու հնարավորություն պիտի ստանա:

Յուրաքանչյուր մանկավարժի խնդիրն է զարգացնել սովորողների գեղագիտական ճաշակը, հաղորդակցային ունակությունները, սովորեցնել զգալ արվեստի ստեղծագործությունների կատարելությունն ու ներդաշնակությունը, գթասիրտ, զգայուն վերաբերմունք դաստիարակել շրջապատի նկատմամբ: Այդպիսի հատկանիշների զարգացումը նշանակում է հաղորդակցում համամարդկային մշակույթին և նրա դրսևորումներին՝ գիտական հետազոտման մշակույթին, գործունեության մշակույթին, գեղագիտական մշակույթին, միջանձնային հաղորդակցման մշակույթին, վարքի մշակույթին և այլն:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ բացահայտել ուսուցչի դասապրոցեսին նախապատրաստվելու էությունն ու կարևորությունը:

Հետազոտության խնդիրներն են՝

- Ուսումնասիրել թեմային առնչվող գիտաուսումնական , գիտամանկավարժական և գիտամեթոդական գրականություն
- Ներկայացնել դասին պատրաստվելու կարևորությունը , գրանցել արդյունքները,
- Համեմատել դասին նախապատրաստված ուսուցչի հաջողությունները և հաշվի առնել այն, թե կգրանցեր արդյոք այդպիսի հաջողություններ այն ուսուցիչը, ով դասին նախապատրաստված չէր:
- Սահմանել դասին նախապատրաստված ուսուցչի քայլերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Վերջին տարիներին կրթության բովանդակության և նպատակների յուրացման առումով հսկայածավալ նորարարություններ և առաջարկություններ են արվել տարբեր երկրների և միջազգային կրթական կառույցների կողմից, մշակվել և ներդրվել են ուսումնադաստիարկչական աշխատանքների կազմակերպման առավել արդյունավետ եղանակներ, սովորողների ուսումնական կարողությունների խթանման նոր հնարավորություններ:

Մանկավարժական գործունեությունը բարդ և բազմաբաղադրիչ է, որի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ուսուցչի վարպետությամբ, մասնագիտական որակներով և հաղորդակցական կարողությունների տիրապետման մակարդակով: Ն. Վ. Կուզմինան նշված բաղադրիչներից մասնավորապես

կարևորում է երեքը՝ կառուցվածքայինը, մեթոդականը և սոցիալ– հոգեբանականը: Ընդ որում՝ վերջիններս բնութագրում են մանկավարժական գործընթացի ներքին կառուցվածքը: Դրանց միասնությունն ու փոխկապակցվածությունը հնարավորություն են տալիս ամբողջական ձևով իրականացնել մանկավարժական համակարգի ծրագրավորված խնդիրները: Այդ միասնության մեջ հիմնախնդրի լուծման իմաստով գլխավորը սոցիալ–մանկավարժական բաղադրիչն է՝ մանկավարժական հաղորդակցումը, որն ապահովում է մյուս երկու բաղադրիչների իրականացումը: Մանկավարժական գործունեությունը անթիվ ստանդարտ և ոչ ստանդարտ մանկավարժական խնդիրների լուծման գործընթաց է: Մանկավարժական խնդիրների առարկան կարող են լինել աշակերտների գիտելիքները, նրանց անհատական–գործնական որակները, հարաբերությունները և այլ այնպիսի բնորոշումները, որոնք հակված են որակական և քանակական փոփոխությունների: Օրինակ՝ մանկավարժական խնդրի առաջացման ժամանակ, երբ անհրաժեշտ է լինում բացատրել նոր նյութ, մանկավարժը վերլուծում է իրավիճակը, փնտրում է բացատրելու հնարավոր տարբերակներ, ընտրում է արդյունավետ մեթոդներ, այնուհետև իրականացնում է մանկավարժական գործողություններ:

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների հաստատուն կազմի և սովորողների գործունեության կազմակերպման ձև: Դասը միևնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է՝ կոնկրետ օրակարգով (դասացուցակ) և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Այդ ձևում ներդրված են կրթականդաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեություն և դրանից բխող դիդակտիկ տարրեր:1

Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և վերջապես նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ:

ԳԼՈՒԽ 1.1 ԴԱՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Նախապատրաստական փուլում ,մինչև նոր ուսումնական տարին սկսվելը, ուսուցիչը պարտադիր կարգով ուսումնասիրում է ուսումնական ծրագրերը, ժամանակակից մանկավարժական, հոգեբանական գրականությունը, մեթոդական ձեռնարկները, լրացուցիչ գրականությունը , ժամանակակի մանկավարժական, հոգեբանական գրականությունը, մեթոդական ձեռնարկները, առաջավոր մանկավարժների փորձը, բազմահմուտ ուսուցիչների կազմած թեմատիկ պլանավորումները:{6}

Եվ ահա այդ ամենից հետո, ուսուցիչը, դեռևս օգոստոս ամսի կեսերին , կազմում է իր սեփական թեմատիկ պլանը, որոշակիացնում յուրաքանչյուր դասի տեղը թեմատիկ պլանում:

Հիմք ընդունելով թեմատիկ պլանը, ուսուցիչը կազմում է օրացուցային պլանը, ուր ծրագրային նյութերը բաշխում է ուստարվա կամ կիսամյակի ամիսների, շաբաթների, օրերի վրա , նշում է դրանց իրացման ժամկետները:

Այսպիսով, ավարտվում է ուսուցչի գործունեության նախապատրաստական փուլը: Սկսվում է նոր ուսումնական տարին: Դրա հետ մեկտեղ սկսվում է նաև ուսուցչի ուսումնական գործունեության կատարողական փուլը:

Կատարողական փուլում հիմնականը, գլխավորը դասի նախապատրաստումն է: ՈՒսուցիչն ինչպե՞ս է նախապատրաստում տվյալ դասը. ուսումնասիրում է դասագրքի համապատասխան տեքստը , ինչպես հարկն է յուրացնում է տեքստի բովանդակությունը, ձևավորում է գլխավոր հասկացությունները: Տեքստում առանձնացնում է առանցքային, հիմնարար մասերը, դուրս է գրում բարդ բառերը, տերմինները, դրանք ստուգաբանում է բառարաններով, իր համար դարձնում հասկանալի: Վերացարկում է տեքստի շարադրանքում եղած փաստերը, տվյալները, իրադարձությունները , բանաձևը, ֆորմուլաները, հայտնաբերում դրանց հատկանիշները: Սինթեզում է տեքստում եղած երևույթները, առարկաները,

գործընթացները, ի հայտ բերում դրանց ներքին և արտաքին կապերը, կախումներ ու փոխկապակցություններ: Լրացուցիչ գրականությունից, սկզբնաղբյուրներից քաղում է դասագրքի տեքստին համապատասխանող մտքերը, տվյալները: Որոշում է , թե միջառարկայական , միջգիտական ինչ կապեր է օգտագործելու ուսումնական նյութը բացատրելու ժամանակ: Պրոբլեմային ի՞նչ առաջադրանքներ է տալու աշակերտների ճանաչողական ակտիվությունը զարգացնելու համար:3

Մտովի որոշում է տվյալ դասին օգտագործվելիք դիտագնեական պարագաները, ուսուցման տեխնիկական միջոցները և այլն, : Այս ամենից հետո, ուսուցիչն իրեն փորձարկում է տվյալ դասանյութը պատմում է, բացատրում , պարզաբանում , իրագործում իր բոլոր նախատեսումները:

Այնուհետև հարկավոր է կազմել օրվա դասի պլանը:

Օրվա դասի պլանում, մեր համոզմամբ, արտահայտվում են հետևյալ տարրերը.

- Դասի անցկացման օրը, ամսաթիվը, թվականը, թեմատիկ պլանում եղած նրա համարը, դասարանը, դասի կազմակերպման և անցկացման տեղը, թեմայի անվանումը, կրթական , դաստիարակչական և զարգացման խնդիրները, դասի կառուցվածքի բաղադրամասերը , դասի իրար հաջորդող փուլերը, ըստ փուլերի ժամանակի բաշխումը, ուսումնական նյութի , դասի կահավորման միջոցները, տնային հանձնարարությունները1:

Սկսնակ ուսուցիչը անպայման պետք է գրի ընդարձակ դասի պլան ՝ մանրամասն նկարագրելով դասի բովանդակությունն ու ընթացքը: Նա պետք է քայլ առ քայլ նկարագրի դասն ամբողջությամբ, նույնիսկ այն, թե քանի հոգու պետք է դաս հարցնի և ինչ հարցեր պետք է տա, քանի բոպե պետք է տևի դասի այս կամ այն փուլը:

Առանձին մանկավարժներ գտնում են, որ հմուտ և իր գործի գիտակ մանկավարժը կարող է դասի պլան չկազմել: Մենք գտնում ենք, որ բոլոր ուսուցիչները պետք է նախապես պատրաստվեն դասին, իսկ դասի պլանը նպաստում է դրան , քանզի ունի կիրառնորոշիչ դեր , այն ապահովում է դասի կազմակերպվածությունը, ուսուցչի անսխալ գործունեությունը:

Դասին պետք է նախապատրաստվի առաջին հերթին ուսուցիչը և նա էլ պետք է աշակերտներին նախապատրաստի այդ օրվա դասին: Այդ օրվա դասի հաջողությունն ու անբյունավետությունը կախված է նաև աշակերտների դասին նախապատրաստվելուց, որը ենթադրում է.

1 աշակերտների ծանոթությունը առաջիկա ուսումնասիրության ենթակա նյութերին,

2. նույն նյութին առնչվող լրացուցիչ գրականության ուսումնասիրություն և կոնսպեկտավորում, 3. որոնումների կազմակերպում,

4. լաբորատորային , ուսումնական կաբինետներում փորձերի դնում, արդյունքների վերլուծություն և ամփոփում,

5. ուսուցչի կողմից տրվող տնային առաջադրանքների մասնակի կատարում և այլն:

Այս ամենն. անշուշտ , հնարավորություն կընձեռեն աշակերտներին ավելի նպատակասլաց գործողություն ծավալել բոլոր այն դասերին, որոնք արդեն ծանոթ են: Այսպիսի գործունեությունը սովորողների մեջ կառաջացնի ուսումնասիրվելիք նյութերի նկատմամբ տրամադրվածություն, հետաքրքրություն: Իսկ մոտիվացիան, մեր խորին համոզմամբ, մեծ նշանակություն և դեր է խաղում դասապրոցեսի ժամանակ:

ԳԼՈՒԽ 1. 2

ԴԱՍԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

Մենք գտնում ենք, որ ուսուցիչը պետք է ունենա.

1) իր աշխատանքը ծրագրելու կարողություն, այդ թվում՝

ա) առանձին դասընթացների, թեմատիկ միավորների և դասերի պլաններ մշակելու, բ) ուսումնական գործընթացն արդյունավետ պլանավորելու,

գ) արդյունավետ ուսուցման համար ինքնուրույն կամ գործընկերների հետ միասին ուսումնական նյութեր ստեղծելու:

2) ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու կարողություն, այդ թվում՝ ա) անհատականացված ուսուցում իրականացնելու

բ)սովորողի տարիքային, հոգեբանական և կազմաբնախոսային առանձնահատկությունները, անհատական և խմբային գործունեության շարժառիթներն ու վարքագիծը հաշվի առնելու,

գ) կրթության բովանդակության յուրացումն ապահովող ուսուցման ժամանակակից մեթոդներ և հնարներ ներդրելու,

դ) ուսուցման համար բարենպաստ սոցիալ-հոգեբանական միջավայր ստեղծելու:

0. Գնահատման կարողություն այդ թվում՝

ա) սովորողի առաջադիմության գնահատումը՝ դիտարկելով գնահատումը որպես սովորողի շարունակական զարգացումն ապահովող միջոց:

0. Անդրադարձ (ռեֆլեքսիա) կատարելու կարողություն, այդ թվում ՝

ա) ուսուցման և դաստիարակության գործընթացին մշտական անդրադարձ կատարելու, սեփական աշխատանքի արդյունքները շարունակաբար գնահատելու, սեփական պլանները վերանայելու:

5) մասնագիտական զարգացման կարողություն, այդ թվում՝

ա) ինքնուրույն և գործընկերների հետ մասնագիտական նպատակային հետազոտություններ կատարելու, ամփոփելու և եզրակացություններ ներկայացնելու,

բ) սեփական մասնագիտական զարգացումը պլանավորելու և իրականացնելու:

Ուսուցչի գործունեությունը բարդ է և աշխատատար: Ուսուցչի մասին խոսելիս սովորաբար կարևորվում է նրա դերը հասարակության մեջ բարեփոխումներ իրականացնելու, մարդասիրական արժեքներ կրելու և դրանք սովորողներին փոխանցելու տեսանկյունից:

Մասնագիտական գրականության մեջ հաճախ է նշվում ուսուցչի անձնային, մասնագիտական որակների կարևորությունը: Հատկապես ընդգծվում են դասավանդվող առարկայի և երեխաների հոգեբանական առանձնահատկությունների իմացությունը, դասավանդման արվեստը և մանկավարժական տակտը, ուսուցչի անձնային բարոյական, կամային որակները, ինչպիսիք են զուսպ, ազնիվ, ուշադիր լինելը, բարեխղճությունը, նրբանկատությունը, երեխաների նկատմամբ ունեցած սերը և այլն:

Ըստ ժամանակակից մանկավարժական մոտեցումների՝ ուսուցչին ներկայացվող պահանջների մեջ կարող է հանդիպել այսպիսի բնորոշումների.

- որոշում կայացնող,
- ուսուցմանն աջակցող (ֆասիլիտատոր)
- ուսուցման գործընթացին հետևող,
- ուսուցման ընթացքը գնահատող,
- անձնական օրինակ ծառայող:

Ուսուցչի մասնագիտական որակները բնորոշվում են նաև այլ տեսանկյունից՝

- Արդարացի և անաչառ լինելը: Իր գործունեության ընթացքում ուսուցիչը պարբերաբար գնահատում է աշակերտներին և գնահատելիս ուսուցչի արդարացի լինելը ունի նաև դաստիարակչական նշանակություն:
- Պահանջկոտությունը, որը դրսևորվում է և՛ իր, և՛ իր աշակերտների նկատմամբ:
- Հումորի զգացումը: Իզուր չի ասվում, որ ուրախ և աշխույժ ուսուցիչն ավելի լավ է ուսուցանում, քան մռայլ ուսուցիչը: Հումորի զգացում ունեցող ուսուցիչը դասարանում ստեղծում է անմիջական, անկաշկանդ և բարյացակամ մթնոլորտ:
- Մանկավարժական տակտը: Այն աշակերտների նկատմամբ բարեկիրթ, չափավոր վերաբերմունքի դրսևորումն է, որի հիմնաքարը աշակերտի անձի նկատմամբ ունեցած հարգանքն է:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ նշվում է նաև ուսուցչին ներկայացվող մի շարք պահանջներ, ըստ որի ուսուցիչը պետք է ՝

- ունենա աշխարհայացքային կողմնորոշում և հոգևոր բարձր արժեքներ.
- աշակերտի մեջ ձևավորի ամբողջ կյանքի ընթացքում սովորելու անհրաժեշտության գիտակցումը.
- գիտակցի, որ ինքը դպրոցի անբաժան մասն է.
- ունենա անձնական պատասխանատվության զգացում.

- ունակ լինի մարդկանց մեջ տեսնելու անհատին.
- ունենա հաղորդակցման հմտություն.
- ցուցաբերի համագործակցային մոտեցում.
- ունենա ղեկավարման հմտություններ.
- տիրապետի տեղեկատվական տեխնոլոգիաներին և դրանք օգտագործի դասապրոցեսի արդյունավետության բարձրացման նպատակով:

Մենք տեսնում ենք մի շարք էական և կարևոր կետեր, որոնք իրականացնելու համար ուսուցիչը պետք է նախապատրաստված լինի դասին:

Դասին նախապատրաստված լինելը դասի արդյունավետության բարձրացման հիմնական ուղիներից է, իսկ ժամանակակից դասի արդյունավետության բարձրացումը ենթադրում է մի շարք ուղիների գործադրում, իսկ դրանցից առաջինն ու կարևորը ՝ ուսուցչի պրոֆեսիոնալ նախապատրաստվածությունն է: Ուսուցիչը պետք է սիրի իր մասնագիտությունը , սիրի երեխաներին, խորապես իմանա իր կողմից դասավանդվող ուսումնական առարկայի գիտական գիտելիքների մանրամասները , հարակից առարկաների հիմունքները:5

Ունենա մանկավարժական , հոգեբանական մեթոդական հարուստ գիտելիքներ , լինի համակողմանի զարգացած, դաստիարակված, լայն մտահորիզոն ունեցող անձնավորություն: Օժտված լինի բարոյական բարձր որակներով: Իր մեջ մարմնավորի իսկական ուսուցչի կերպարը: Հասկանալի է, որ առանց այս ամենի անհնար է ապահովել դասի բարձր արդյունավետությունը:

ԳԼՈՒԽ 2

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՔԱՐ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՂ

Ուսուցիչն է մանկավարժական մշակույթի հիմնաքարը և արժեհամակարգ ձևավորողը, ուրեմն նա պետք է ունենա անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, որն էլ սկսվում է մանկավարժական կողմնորոշումից:

Մարդկության կողմից ստեղծված նյութական և հոգևոր արժեքներն իրենց արտացոլումն են գտնում կրթության և դաստիարակության բովանդակության մեջ, մանկավարժի ստեղծագործական գործունեության միջոցներում: Մանկավարժական մշակույթը ընդհանուր մշակույթի մի մասն է, այդ մասին ժամանակին գրել են Յան Ամոս Կոմենսկին, Մ. Վ. Լոմոնոսովը, Կ. Դ. Ուշինսկին: Ըստ Վ. Ա. Սուխոմլինսկու՝ մանկավարժական մշակույթի մեջ պետք է առանձնացնել հետևյալ բաղադրիչները՝

- ✔ մարդասիրությունը, աշակերտի մտքին և սրտին անմիջականորեն դիմելը,
- ✔ իր առարկայի խոր իմացությունը, մանկավարժական գործընթացի բոլոր նրբություններին տիրապետելու ունակությունը, մանկավարժի հուզականությունը, զգայունակությունը, զգացմունքայնությունը,
- ✔ գործունեության տարբեր ձևերում երեխայի անհատական, տարիքային, հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման մեթոդների հարստությունն ու բազմազանությունը,
- ✔ մանկավարժի ստեղծագործական լաբորատորիայի առկայությունը,
- ✔ մանկավարժի գործունեության մեջ հոգեբանական ամուր հիմքը,
- ✔ ուսուցչի լեզվական մշակույթը, խոսքի մատչելիությունը, տրամաբանությունը, դիտողականությունը, ինքնավերահսկումը, արտահայտչամիջոցների հղկվածությունը: 1

Դաստիարակությունը դաստիարակողի և դաստիարակվողների նպատակաուղղված, նպատակասլաց գործունեության ընթացքն է, որի շնորհիվ լուծվում են դաստիարակվողների անձի ձևավորման, զարգացման հիմնախնդիրները1: Կարելի է ասել՝ դաստիարակությունը նպատակասլաց ներգործությունների ամբողջական համակարգ է: Այն մանկավարժական գիտության շատ դժվարին բնագավառներից է, որն ունի մի շարք առանձնահատկություններ:

Արժեքային համակարգի ձևավորման մասին խոսելիս նպատակահարմար ենք գտնում նախ անդրադառնալ դաստիարակությանը և կարևորելով բարոյական, հայրենասիրական, աշխատանքային դաստիարակությունը կարող ենք տալ հստակ սահմանում. արդյոք ո՞րն է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման գործընթացի էությունը:

Հաշվի առնելով դաստիարակության առանձնահատկությունները, իսկ դրանք են.

–օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հանդես գալը,

– միանգամից չերևացող կողմը,

– երկարատևությունը,

–կոմպլեքսային բնույթը,

–երկկողմանի բնույթը,

–ամբողջական բնույթը,

կարող ենք նշել, որ սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ընթացքում դրսևորվորվում է դաստիարակությունն իր բոլոր առանձնահատկություններով : Այսպիսի հետևություն մենք արել ենք դասապրոցեսի ընթացքում արժեքային համակարգի ձևավորման ժամանակ :

ԳԼՈՒԽ 2.1 ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՔԱՐ

Մարդկության կողմից ստեղծված նյութական և հոգևոր արժեքներն իրենց արտացոլումն են գտնում կրթության և դաստիարակության բովանդակության մեջ, մանկավարժի ստեղծագործական գործունեության միջոցներում: Մանկավարժական մշակույթը ընդհանուր մշակույթի մի մասն է, այդ մասին ժամանակին գրել են Յան Ամոս Կոմենսկին, Մ. Վ. Լոմոնոսովը, Կ. Դ. Ուշինսկին: Ըստ Վ. Ա. Սուխոմլինսկու՝ մանկավարժական մշակույթի մեջ պետք է առանձնացնել հետևյալ բաղադրիչները՝

• ¬մարդասիրությունը, աշակերտի մտքին և սրտին անմիջականորեն դիմելը,

• իր առարկայի խոր իմացությունը, մանկավարժական գործընթացի բոլոր նրբություններին տիրապետելու ունակությունը, մանկավարժի հուզականությունը, զգայունակությունը, զգացմունքայնությունը,

• ¬գործունեության տարբեր ձևերում երեխայի անհատական, տարիքային, հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման մեթոդների հարստությունն ու բազմազանությունը,

• ¬մանկավարժի ստեղծագործական լաբորատորիայի առկայությունը,

• ¬մանկավարժի գործունեության մեջ հոգեբանական ամուր հիմքը,

• ուսուցչի լեզվական մշակույթը, խոսքի մատչելիությունը, տրամաբանությունը, դիտողականությունը, ինքնավերահսկումը, արտահայտչամիջոցների հղկվածությունը: Մանկավարժի վարքը ուսուցչի անհատական մանկավարժական մշակույթի դրսևորումն է: Մանկավարժական մշակույթը այն հիմնաքարն է, որի վրա ձևավորվում է ուսուցչի մանկավարժական վարպետությունը: Մանկավարժական մշակույթի կառուցվածքը

բազմաշերտ է և ներառում է բարոյական տեսանկյուններ, անձի հոգևոր ներաշխարհի դրսևորման միջոցները հաղորդակցման և գործունեության մեջ: Ապագա մանկավարժի արտաքին և ներքին մշակույթի փոխադարձ կապը նպաստում է մասնագիտական իդեալի վերաբերյալ պատկերացումների որոշակիացմանը, այդ իդեալին հասնելու ուղիների որոնմանը: Մանկավարժական մշակույթը մի կողմից ըմբռնվում է որպես ուսուցչի հոգևոր–բարոյական մշակույթ, մանկավարժական գործունեության մշակույթ (նպատակ–միջոցներ–արդյունք–վերլուծություն), մտածողության, ստեղծագործական մշակույթ, գործունեության մեջ ինքնարտահայտման և անդրադարձ կատարելու ունակության, երեխային հոգեբանամանկավարժական աջակցության մշակույթ: Այսպիսով՝ մանկավարժական մշակույթը ձևավորվում և զարգանում է ընդհանուր մշակույթի հիման վրա: Այն հոգեբանամանկավարժական համոզմունքների և վարպետության, ընդհանուր զարգացման և մասնագիտական–մանկավարժական հատկանիշների միասնություն է:1

Մանկավարժի վարքը ուսուցչի անհատական մանկավարժական մշակույթի դրսևորումն է: Մանկավարժական մշակույթը այն հիմնաքարն է, որի վրա ձևավորվում է ուսուցչի մանկավարժական վարպետությունը: Մանկավարժական մշակույթի կառուցվածքը բազմաշերտ է և ներառում է բարոյական տեսանկյուններ, անձի հոգևոր ներաշխարհի դրսևորման միջոցները հաղորդակցման և գործունեության մեջ: Ապագա մանկավարժի արտաքին և ներքին մշակույթի փոխադարձ կապը նպաստում է մասնագիտական իդեալի վերաբերյալ պատկերացումների որոշակիացմանը, այդ իդեալին հասնելու ուղիների որոնմանը: Մանկավարժական մշակույթը մի կողմից ըմբռնվում է որպես ուսուցչի հոգևոր–բարոյական մշակույթ, մանկավարժական գործունեության մշակույթ (նպատակ–միջոցներ–արդյունք–վերլուծություն), մտածողության, ստեղծագործական մշակույթ, գործունեության մեջ ինքնարտահայտման և անդրադարձ կատարելու ունակության, երեխային հոգեբանամանկավարժական աջակցության մշակույթ:3

Այսպիսով՝ մանկավարժական մշակույթը ձևավորվում և զարգանում է ընդհանուր մշակույթի հիման վրա: Այն հոգեբանամանկավարժական համոզմունքների և վարպետության, ընդհանուր զարգացման և մասնագիտական–մանկավարժական հատկանիշների միասնություն է: Միաժամանակ մանկավարժական մշակույթը տարբեր «մշակույթների» իմացական, հաղորդակցական, մեթոդաբանական, խոսքի զարգացման և այլն, պարզագույն հանրագումար չէ: Դա ամբողջական կրթություն է, որը դրսևորվում է մի կողմից՝ որպես ուսուցչի մանկավարժական վարպետության բաղադրիչ, մյուս կողմից՝ որպես մանկավարժական վարպետության ձևավորման գործընթացում ձեռք բերված արժեք:

ԳԼՈՒԽ 2.2

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՂ

Հասարակության որակը կախված է զարգացած, կրթված անհատներից, որոնք պետք է կազմեն հասարակության բովանդակային կորիզը, պետք է պատասխանատու և ծանրակշիռ լինեն ոչ միայն իրենց մասնավոր կյանքի ու կյանքի որակի համար՝ անհաղորդ ու անտարբեր մնալով հասարակությանը և ազգային խնդիրներին, այլև պետք է լինեն ակադեմիական հիմնարար գիտելիքներով զինված, մեր ժամանակների նորագույն ձեռքբերումներին քաջատեղյակ, ազգային գործոնն առաջ մղող, մարդկային բարձր արժանապատվությամբ և շրջահայեցությամբ օժտված առաջնորդներ, որոնք կհամալրեն հանրային կյանքի բոլոր բնագավառները:

Բարեփոխությունների անշրջելի ընթացքը ժամանակակից կրթական համակարգի առանձնահատկությունն է: Կրթական ոչ մի համակարգ չի կարող արդյունավետ գործել համաշխարհային կրթական գործընթացներից դուրս և այդ ամենից մեկուսացած: Գիտության, տեխնիկայի անհնախադեպ առաջընթացը նոր մոտեցումներ ու պահանջներ է սահմանում նաև կրթամշակութային ոլորտի համար:

Օրվա հրամայականն են դառնում ուսուցման նոր մեթոդների որոնման, կրթության բովանդակության նորացմանը միտված աշխատանքները: Անընդհատ փոփոխվող աշխատանքային միջավայրում, արագորեն վերակազմավորվող աշխատաշուկայում ավելի ու ավելի է կարևորվում որակյալ ուսուցման և որակյալ մասնագետների պահանջը, ինչը բնականորեն նպաստում է հանրակրթության դերի բարձրացմանը: Կրթությունը դառնում է հասարակության զարգացման խթանիչ ուժ՝ միաժամանակ ապահովելով նաև մարդկային համակեցության ներդաշնակ պայմաններ հասարակության բոլոր շերտերի համար: Հանրակրթության ոլորտում տեղի ունեցող համակարգային փոփոխությունները, որոնք պայմանավորված են համաշխարհային զարգացումներով, ենթադրում են ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և վերաիմաստավորում, կրթության ոլորտում ազգային առանձնահատկությունների և միջազգային փորձի արդյունավետ համադրում: Այս 2 պայմաններում արդեն կարևոր խնդիր է դառնում պետական–ազգային մտածողություն ունեցող և կյանքի արագընթաց զարգացումներին հաղորդակից անհատի ձևավորումը, ինչի իրականացմանն էլ պետք է ուղղված լինի կրթական քաղաքականությունը: Բայց նախ և առաջ ուսուցիչն ինքը պետք է լինի այդպիսին: Անդրադառնանք ուսուցչի կերպարին և դերին:

Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:

Մի շարք հետազոտողներ, ելնելով այսօրվա իրականությունից, որում առկա են կրթության մարդասիրացման կայուն միտումներ, փորձ են անում տալ 21–րդ դարի ուսուցչի լիարժեք նկարագիրը: Վ. Ի. Անդրեևը ներկայացնում է երրորդ հազարամյակի ուսուցչի անձի մոդելը, որին հատկանշական են՝

• կրթվածությունը՝ գիտության և արվեստի տարբեր բնագավառների վերաբերյալ գիտելիքներ, առաջադիմական հայացքներ, բարձր բարոյականություն, գեղագիտական ճաշակի և հոգևոր մշակույթի զարգացվածություն, ստեղծագործական ինքնազարգացում,

• ¬հոգևոր զարգացած ներաշխարհը՝ բարոյական բարձր հատկանիշները, սերը դեպի երեխաները, մասնագիտական կոչման և կյանքի նպատակների գիտակցումը, միջանձնային հարաբերությունների ներդաշնակությունը, դիմացինի հոգին թափանցելու, անդրադարձ կատարելու ունակությունը,

ստեղծագործական հատկանիշները՝ նորի և ինքնատիպի որոնումը, ստեղծագործական գործունեության դրդապատճառների առկայությունը, իր և սաների մեջ ստեղծագործական ունակությունների զարգացումը, կյանքում, մասնագիտական գործունեության մեջ և մշակույթի աշխարհում ազատության զգացումը և ինքնորոշման ունակությունը,

• ազատությունը՝ անձնական և մասնագիտական պատասխանատվության բարձր մակարդակը, հոգևոր և նյութական արժեքների աշխարհում կողմնորոշվածությունը, որոշումներ ընդունելու ունակությունը, կենսական դիրքորոշումը,

• ¬մարդասիրությունը՝ գթասրտությունը, այլոց օգնելու ունակությունը, համբերատարությունը, դիմացինին լսելու և նրա կարծիքը հարգելու կարողությունը, աշակերտների, նրանց ծնողների, գործընկերների հետ համագործակցելու ձգտումը,

• ¬քաղաքացիական ակտիվությունը՝ շրջապատում և աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների գնահատումներում դատողությունների և վերլուծությունների օբյեկտիվությունը, հայրենասիրությունը, պարտքի և պատասխանատվության զգացումը, լավատեսությունը, իր և այլ ժողովուրդների պատմության ու մշակույթի իմացությունը,

• մրցունակությունը՝ ժամանակի ոգուն և մասնագիտական պահանջներին համապատասխանությունը, մանկավարժական առաջադիմական փորձի ուսումնասիրումը, այդ փորձի ստեղծագործաբար կիրառումը և զարգացումը, հետազոտական աշխատանք կատարելու ունակությունը, մանկավարժական նորագույն տեխնոլոգիաներին տիրապետումը, աշխատանքում բարձր արդյունքների հասնելու ձգտումը,

• ¬հաղորդակցումը մշակույթին՝ սոցիալ–մշակութային իրավիճակների վերաբերյալ գիտելիքներ, ժողովրդական ծեսերի, սովորույթների և ավանդույթների իմացություն, արվեստի տեսակների վերաբերյալ գիտելիքներ և խոր հետաքրքրություն, սովորողների մեջ մշակույթի նկատմամբ հետաքրքրության ձևավորում1 :

21–րդ դարի ուսուցչի՝ Վ. Ի. Անդրեևի կողմից առաջարկվող մոդելի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այդպիսի ուսուցիչը պետք է տիրապետի մանկավարժական բարձր մշակույթի, լինի արժեհամակարգի կրող: Մանկավարժը, որը տիրապետում է մանկավարժական մշակույթի բարձր մակարդակի, ունի սեփական ոճը, մանկավարժական անհատական ձեռագիրը, ձգտում է կերտել մանկավարժի օրինակելի կերպար:

Մենք լիովին համաձայն ենք այն դիտարկմանը, որ մանկավարժական մշակույթի մակարդակը փոխադարձաբար կապված է կրթադաստիարակչական գործընթացի մակարդակի հետ: Բայց և այնպես, մեր կարծիքով, այդ անընդհատ գործընթացի մեջ է ամփոփված մշակույթի էությունը. մարդը (տվյալ դեպքում՝

ուսուցիչը) կախված է հասարակության ընդհանուր մշակույթի զարգացումից, բայց և հասարակության մշակույթի զարգացումը կախված է նրա յուրաքանչյուր անդամի անհատական մշակույթից: Ուսուցչի անձի մանկավարժական ուղղվածությունից (անձնային որակներ, մեթոդամսնագիտական պատրաստվածություն, մանկավարժական վարպետություն, հոգեբանամանկավարժական խորագիտություն, վարք, հաղորդակցում և այլն) են կախված մանկավարժական գործունեության իրականացման բնույթն ու արդյունավետությունը: Այդ գործոններն են պայմանավորում ուսուցչի ինքնակատարելագործումը, որը նրա հետագա գործունեության մեջ արտահայտում է վարքային դրսևորումներ մշակույթում, մանկավարժական մտածողության մեջ, որն էլ հանգեցնում է ուսուցչի կողմից մանկավարժական մշակույթի հստակ ըմբռնմանը և յուրացմանը: Ապագա ուսուցիչների մանկավարժական–մասնագիտական մշակույթին , արժեքային համակրգին նվիրված հետազոտություններում (Օ. Ա. Շկիլյովա, Ա. Է. Կորոբովա, Մ. Վ. Նիկոլաևա և այլք) մանկավարժական մշակույթը դիտարկվում է որպես մանկավարժի մասնագիտության կարևոր հատկանիշ, ուսուցչի կողմից մարդկության մանկավարժական փորձի տիրապետման որոշակի աստիճան, մանկավարժական արժեքների անընդհատ զարգացող համակարգ, ուսուցչի գործունեության միջոց և վարքի արտահայտություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հասարակության որակը կախված է զարգացած, կրթված անհատներից, որոնք պետք է կազմեն հասարակության բովանդակային կորիզը, պետք է պատասխանատու և ծանրակշիռ լինեն ոչ միայն իրենց մասնավոր կյանքի ու կյանքի որակի համար՝ անհաղորդ ու անտարբեր մնալով հասարակությանը և ազգային խնդիրներին, այլև պետք է լինեն ակադեմիական հիմնաբար գիտելիքներով զինված, մեր ժամանակների նորագույն ձեռքբերումներին քաջատեղյակ, ազգային գործոնն առաջ մղող, մարդկային բարձր արժանապատվությամբ և շրջահայեցությամբ օժտված առաջնորդներ, որոնք կհամալրեն հանրային կյանքի բոլոր բնագավառները
- Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:
- Փորձը ցույց է տալիս,որ մանկավարժական շատ հիմնախնդիրներ հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է դրսևորել ստեղծագործական մտածողություն:
- Արժեքային համակարգի ձևավորման գործում բացառիկ է բարոյական դաստիարակության դերը:
- Բարոյական զարգացման հիմքը երեխաների մեջ հումանիստական հարաբերությունների ու փոխհարաբերությունների ձևավորումն է:
- Դպրոցականների մեջ արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունենում բոլոր առարկաների դասավանդման ընթացքում, առավելապես՝Գրականության:

- Սեփական գիտելիքների հաստատումը, կարողությունների և հմտությունների դրսևորումը և կոլեգաների հետ համագործակցությունը բացառիկ դեր ունեն սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ժամանակ:
- Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել սովորողների զարգացումը, երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Ա., Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005,
2. ԳՅուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015
3. Сухумлинский В. А., Избранные педагогические сочинения в 3 т., т. 1,
4. Железовская Г. И., Формирование педагогической интелектуальной культуры // Педагогика, 1995, № 2,
5. Ушинский К. Д., Педагогика, М., 2019:
6. https://innostud.am/application/library/5ced296a.pdf